<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 10

09.09.2021թ. կայացած շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի վերաբերյալ

ք. Երևան 14.09.2021թ.

2021 թվականի սեպտեմբերի 09-ին տեղի ունեցավ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ որոշում ընդունել:

Քվեարկությանը մասնակցում էին

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ.Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար

Կառավարաման խորհրդի անդամներ՝

Ա.Հովհաննիսյան -Արդարադատության նախարարի տեղակալ

Լ.Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Ն.Տերյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա.Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Կ.Միրզաբեկյան - ՀԱՊՀ դասախոս, դոցենտ

Ա.Հայրապետյան - Ֆինանսների նախարարի տեղակալ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու

Ա.Մկրտչյան - Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների ասոցիացիայի նախագահի գլխավոր խորհրդական

Գ.Սահակյան - խորհրդի քարտուղար

Հրավիրված էին՝

Ա. Կոտոյան – ՀՀ ՇՎՏՄ ղեկավար,

Ա. Մկրտչյան	– ՀՀ ՇՎՏՄ ղեկավարի տեղակալ,
Ա.Դանիելյան	-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ:

Քվեարկության օրակարգային հարցեր

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:

Զեկուցող՝ Ա. Կոտոլյան

2. Կարողությունների զարգացման վերաբերյալ առաջարկությունների քննարկում:

Զեկուցող՝ Առաջարկվում է խորհրդի յուրաքանչյուր անդամին ներկայացնել առաջարկություն տեսչական մարմնի կարողությունների զարգացման վերաբերյալ

3. Տեղական արտադրողների պաշտպանության համար մեխանիզմների կիրառման մոտեցումների քննարկում:

Ներկայացնող՝ Վ.Քերոբյան

4. Քայքայվող պլաստիկի վերաբերյալ:

Ներկայացնող՝ Վ.Քերոբյան

5. Համաձայնեցնել հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթիվը:

Զեկուցող՝ Ա. Կոտոլյան

6. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի 11 հունիսի N706-Ա և 2018 թվականի 11 հունիսի N732-Լ որոշումներում փոփոխություն և լրացում կատարելու մասին» նախագծերին:

Զեկուցող՝ Ա. Կոտոլյան

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը:

Զեկուցող՝ Ա. Սարգսյան

8. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2021 թ. 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Զեկուցող՝ Ա. Սարգսյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին ներկա էին խորհդրի անդամների 2/3-ից ավելին՝ նիստը համարվեց կայացած և խորհրդի քվեարկությանը դրվեց Օրակարգը:

Նյութերը ներկայացվեցին խորհրդի անդամներին քվեարկության:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1. Վ.Քերոբյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
2. Ա.Հովհաննիսյանը ՝ հարցին քվեարկեց կողմ,
3. Լ.Նանուշյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
4. Ն.Տերյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
5. Ա.Ասոյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
6. Կ.Միրզաբեկյանը ՝ հարցին քվեարկեց կողմ.
7. Ա.Հայրապետյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
8. Կ.Սահակյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
9. Ա.Մկրտչյանը՝ հարցին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքում 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատվեց Օրակարգը:

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկուցեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը, մասնավորապես ՇՎՏՄ որակի ապահովման ստորաբաժանման կողմից իրականացված ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի որոշումների անվավեր ճանաչելու պահանջով վարչական դատարան ներկայացված հայցադիմումների և դրանց հիման վրա իրականացված վարչական վարույթների ուսումնասիրության և կառավարման խորհրդի որոշմամբ 15 դատական գործերով անցկացված ծառայողական

քննության արդյունքների մասին: Արարատ Սարգսյանը ներկայացրեց իր վերլուծությունը տվալ հարցի վերաբերյալ և հայտնեց, որ ի վնաս ՇՎՏՄ-ի կայացած վճիռների մասով տեսչական մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովը ավարտել է ծառայողական քննությունը և կազմվել է համապատասխան եզրակացություն:

Տրված հանձնարարականի կատարման ընթացքի վերաբերալ Արմեն Կոտոյանը հայտնեց, որ իրավաբանական վարչության աշխատակիցներին հանձնարարվել է այսուհետ նման դեպքերը բացառելու ուղղությամբ աշխատանքներ տանել տեսչական մարմնի այլ ստորաբաժանումների աշխատակիցների հետ և հետամուտ լինել դատական գործերի ընթացքին:

Արմեն Կոտոյանը հայտնեց, որ ՇՎՏՄ բյուջետային հայտը հաստատելու և ՇՎՏՄ 1-ին կիսամյակի դիմում – բողոքների հաշվետվությանը հավանություն տալու նախորդ նիստին հեռակա քվեարկություն անցկացնելու առաջարկը կատարվել է, որի արդյունքում 22.07.2021թ. կազմվել է 19.07.2021թ. կայացած ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկության թիվ 8 արձանագրությունը:

Արմեն Կոտոյանը հայտնեց, որ ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի շուկայահանման բարելավմանը միտված ճանապարհային քարտեզը ՀՀ ՇՎՏՄ կառավարման խորհրդին ներկայացնելու առաջարկը կատարված է, այն ներկայացվել է խորհրդի անդամներին:

Արթուր Ասոյանը տեղեկացրեց, որ «Շուկայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է ամփոփման փուլում:

Արմեն Կոտոյանը հայտնեց, որ համաձայն 2021 թվականի մարտի 26-ին ընդունված «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ՇՎՏՄ-ին վերապահվել է առանց «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ներկայացուցչի ստուգումների ժամանակ չափումների իրականացման իրավասություն, որի համար անհրաժեշտ է ձեռք բերել չափման միջոցներ: Նավթամթեքի չափանոթներ ձեռք բերելու համար ՇՎՏՄ-ի 2021թ. բյուջեի համապատասխան փոփոխությունը կատարվել է և հայտարարվել է գնման մրցույթ:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցին:

2. Կարողությունների զարգացման վերաբերյալ առաջարկությունների քննարկում:

Խորհրդի յուրաքանչյուր անդամին ներկայացվեց տեսչական մարմնի կարողությունների զարգացման վերաբերյալ ծրագիրը:

Տվյալ հարցի վերաբերյալ Վահան Քերոբյանը տեղեկացրեց, որ ԵՄ-ից ակնկալվող 2.6 մլրդ եվրոյի չափով օժանդակության աջակցության ծրագրի շրջանակներում ուղենիշ 1-ի (Աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը. ուղղակի աջակցություն 30.000 ՓՄՁ-ների) ներքո ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ձևավորվել, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ոլորտային ծրագրերի ու առաջարկների նախնական փաթեթը, որը ներառում է նաև «որակի պետական վերահսկողության մեխանիզմների արդիականացում (որակի նկատմամբ հսկողության արդյունավետ համակարգ, տեխնիկական կանոնակարգեր)» ենթածրագրի ներքո առաջարկներ և հայտնեց, որ ներկայացված ծրագրերի և առաջարկների վերջնական քննարկման և ամփոփման շրջանակներում հաշվի կառնվեն և կընդգրկվեն նաև շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից մշակված ոլորտային ծրագրային առաջարկները:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարողությունների զարգացման վերաբերյալ առաջարկություններին:

3. Տեղական արտադրողների պաշտպանության համար մեխանիզմների կիրառման մոտեցումների քննարկում:

4. Քայքայվող պլաստիկի վերաբերյալ:

Վահան Քերոբյանը առաջարկեց օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերը քննարկել կառավարման խորհրդի հաջորդ նիստում:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցերը ներառվեցին տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստի օրակարգում:

5. Համաձայնեցնել հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթիվը:

Արմեն Կոտոյանը առաջարկեց հաջորդ նիստը անցկացնել 2021 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 15:00-ին:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2021 թվականի հոկտեմբերի 06-ին ժամը 15:00-ին:

6. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի 11 հունիսի N706-Ա և 2018 թվականի 11 հունիսի N732-L որոշումներում փոփոխություն և լրացում կատարելու մասին» նախագծերին:

Տվյալ հարցի վերաբերյալ Արմեն Կոտոյանը հայտնեց, որ ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 732-L և 2018 թ. հունիսի 11-ի N 706-Ա որոշումներում համապատասխան լրացումները արդեն կատարվել են՝ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնին վերապահվել են նոր լիազորություններ, ստեղծելով նոր կառուցվածքային ստորաբաժանումներ և տեսչական մարմնում ավելացվել է լրացուցիչ 20 հաստիք: Ուստի Արմեն Կոտոյանը առաջարկեց հարցը քննարկման առարկա չդարձնել:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հարցը քննարկման առարկա չդարձնել, քանի որ ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի N 732-L և 2018 թ. հունիսի 11-ի N 706-Ա որոշումներում համապատասխան լրացումները արդեն կատարվել են:

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը:

Արարատ Սարգսյանը ներկայացրեց 2021 թվականի 1-ին կիսամյակում Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից իրականացված հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը:

Արթուր Ասոյանը առաջարկեց տարեկան ծրագրով նախատեսված, սակայն ստուգման ընթացքը տնտեսավարողի կողմից խոչնդոտելու հանգամանքով պայմանավորված ստուգում չիրականացված կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ընդգրկել հաջորդ տարվա ստուգումների տարեկան ծրագրում: Արմեն Կոտոյանը առաջարկեց կատարել օրենսդրական փոփոխություն դիմում-բողոքների հիման վրա իրականացվող ստուգումների համար, մեղմացնելով առաջարկվող պահանջները, սակայն Արթուր Ասոյանը կարծիք հայտնեց, որ այն փոփոխելու կարիք չկա, սակայն բոլոր տեսչական մարմիններին կներկայացվեն առաջարկություններ և անհրաժեշտության

դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ կիրականացվեն համապատասխան փոփոխություններ:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը:

8. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2021 թ. 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Արմեն Կոտոյանը առաջարկեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2021թ. 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը անցկացնել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկությամբ 10.09.2021թ.:

Խորհրդի անդամների 9 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատման հաստատումը անցկացնել տեսչական մարմնի կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկությամբ 10.09.2021թ.:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Վ.Քերոբյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Գ.Սահակյան**

ստորագրություն